

միջև առաջացած գժտույթեան պատմութիւնը շարադրելիս, լայնօրէն օգտուելով քաղաքից ստացուած նամակագրական տեղեկութիւններից, մանրամասն նկարագրում է Յովհաննէս Թովմաճանեանի (բնագրում՝ Թովմաճանեան) խաղացած դերը այդ խառնակ օրերին, վերջինիս բանտարկութիւնը եւ ապա անմեղ ճանաչումն ու ազատ արձակումը¹⁷ :

Մատենագրութիւնը.

Ա) Պատմութիւն Տէր Յովհաննիսի Թովմաճանեան, որ զամս երեսուն ի կեանս իւր շրջեցաւ յԵւրոպիայ, յԱսիա, ի Հնդկիս եւ յԱփրիկէ, ի Հապեչստան, շարադրեալ ի նոյն ինքն ի Թովմաճանէ՝ հրամանաւ վեհին իւրոյ արքայի ի Վէնէտիկ, ի վանս Սրբոյն Ղազարու: Ի հայրապետութեան տեսուն Ղուկասու Հայոց կաթողիկոսի ի թուականիս Փրկչին 1790 ի դեկտեմբեր 15. իսկ ըստ Հայոց ՌՄԼԹ - Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. քիւ 1688 (Ձ.Գ.):

Իր այս հիմնական աշխատութիւնը սկսել է շարադրել Ս. Ղազար մտնելուց յետոյ, 1790-1791 թթ., 74 տարեկան հասակում, Ստեփաննոս Մելքոնեան արքահօր եւ որոշ միաբանների յորդորով: Զեռագրի առաջին մասը Յովհաննէս Թովմաճանեանի պատմածը գրի է առնուել Մելքոնեան արքահօր կողմից, այնուհետեւ այն շարունակուել է հեղինակի կողմից: Աշխատութիւնը, որ հաւանաբար եւրոպական գրականութեան ազդեցութեամբ, շարադրուել է երրորդ դէմքով, նոր երեւոյթ է հայ յուշագրութեան պատմութեան մէջ¹⁸ :

Զեռագրի նկարագրութիւնը. ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ - ՌՄԿ. - 1790: ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ Ստեփաննոս Մելքոնեան արքահայր: ԳՐԻԶ՝ Ստեփաննոս Մելքոնեան արքահայր (թթ. 1-49v), հեղինակը (թթ. 50r-269v): ԱՍՍՈՂ՝ Միսիթարեան միաբանութիւն:

¹⁷ Հ. Միխայէլ Զամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1784, էջ 869-870: Հետագայում Թովմաճանեանը շարադրեց այդ օրերի անցուդարձը իր աշխատութեան ԺԴ գլխում (թթ. 90v-99r)՝ Յաղագս Նալոլու Յակօբ Պատրիարքի գրելոյ գրուղթն ի Հոռմ եւ վասն բալուեցի Տէր Մանուէլին...:

¹⁸ Հայ յուշագրութեան մասին տե՛ս Կ. Ա. Դանիէլեան, Մեմուարային գրականութիւն,- Հայ նոր գրականութեան պատմութիւն, հատոր առաջին, Երեւան, 1962, էջ 194-250: